ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **8-ը մայիսի 2023 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

2023 թվականի մայիսի 8-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի արտահերթ նիստը: Նիստին ներկա էին ավագանու 19 անդամները: Բացակա էին Անդրանիկ Գրիգորյանը, Պապ Դանիելյանը, Արարատ Խաչատրյանը, Լիանա Հովհաննիսյանը, Նորիկ Հունանյանը, Սեդրակ Սահակյանը, Արմեն Սեդրակյանը, Լուսինե Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Գագիկ Ոսկանյանը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 8-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի №25-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Զոլաքարի մանկապարտեզ», «Ծովասարի մանկապարտեզ», «Ծովինարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.

3) Մարտունի համայնքի հանրակրթական դպրոցների ավարտական դասարաններին վերջին զանգի կապակցությամբ ընթացիկ դրամաշնորհ հատկացնելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին դրամական օգնություն տրամադրելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 1 հասցեում գտնվող հողամասից առանձնացվող 150.0 քմ մակերեսով հողատարածքն անհատույց օգտագործման իրավունքով Սիմոնյան կրթական հիմնադրամին հանձնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի №25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Զոլաքարի մանկապարտեզ», «Ծովասարի մանկապարտեզ», «Ծովինարի մանկապարտեզ», «Մարտունի քաղաքի Սմբատ Միերյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց», «Մարտունու երաժշտական դպրոց» և «Վարդենիկի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր

խմբագրությամբ հաստատելու մասին» №25-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հանել ««ԶՈԼԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԾՈՎԻՆԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»,» բառերը.

2) որոշման 1-ին կետից հանել 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԶՈԼԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԾՈՎԻՆԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Զոլաքարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
2. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
3. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովինարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2023 թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման «Հանրակրթական դպրոցներում ուսուցում» նախահաշվի 4819 հոդվածից վերջին զանգի կապակցությամբ Մարտունի համայնքի թվով 22 դպրոցների 34 ավարտական դասարաններին հատկացնել 100000-ական (հարյուր հազարական) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի՝ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին տրամադրել միանվագ դրամական օգնություններ՝

   1) Հրաչիկ Աղաջանի Պապեյան (Լիճք բնակավայր) – 100000 (հարյուր հազար) դրամ.

   2) Վոլոդյա Համբարձումի Մուսիկյան (Գեղհովիտ բնակավայր) – 100000 (հարյուր հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ 150.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանի 27.02.2023 թվականի գրությունը՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 1 հասցեում գտնվող հողամասից առանձնացվող 150.0 քմ մակերեսով հողատարածքը անհատույց օգտագործման իրավունքով տասը տարի ժամկետով հանձնել Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Ավագանու անդամներ՝

ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ՄԱՐԻՆԱ ՀՈՎԵՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գագիկ Ոսկանյանը